ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (165)

#9 սեպտեմբեր 2019

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ը ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՆ Է

ԵՊԿ 2019-2020 թթ. ուսումնական տարվա ընդունելության քննությունները

ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյան 2019-2020 թթ. ուսումնական տարվա դիմորդներն ընդունելության քննություններին

2

Նարեկացու արվեստի միության 15-ամյակին

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու խորհրդակատար տեր Շահե քահանա Հայրապետյան, Վարդան եպիսկոպոս Նավասարդյան, Դանիել Երաժիշտ, Նարեկ Հարությունյան

4



Գագիկ Հովունց

Գագիկ Հովունցի Հիշատակին

6

ԵՊԿ էստրադային-զգայական բաժնի 2018-2019 ուսումնական տարվա յեռֆբերումները

Հայաստանում Ֆրանսիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ջոնաթան Լաքոթ, ԵՊԿ Պրոֆեսոր Նարինե Զարիֆյան, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան կուլտուր-ատաշե՝ Ալեքս Բոլթոն, ֆրանսիական դպրոցի ավարտական հանդեսին

3

ԱՆՎԵՐՋ ՎԵՐԱԴԱՐՁ

Կես դար համանշային հեռ

Հունիսի 20-ին Ստեփանակերտի պատկերասրահում տեղի է ունեցել Հակոբ Խալաթյանի «Անվերջ վերադարձ» խորագրով ցուցահանդեսհամերգը:

«Այո,- ասում է մաեստրո Խալաթյանը, - սա և՛ համերգ է, և՛ կենդանի զրույց, որի ընթացքում մարդիկ զանազան և հետաքրքրաշարժ տեղեկություններ են իմանում թե՛ իմ կյանքից, թե՛ հին նվագարաններից»:

Հակոբ Խալաթյան

7

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԵՎ ԴԻՐԻԺՈՐ ՄԱՆՎԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ

«Ժառանգություն» վավերագրական ֆիլմի ցուցադրությունը Երևանում

Օգոստոսի 31-ին, Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում գերմանաբնակ Բեգլարյանների ընտանիքը այդ հարկի տակ էր հավաքել ընտանիքի բարեկամներին, ճանաչված երաժիշտ-երաժշտագետների՝ մի գեղեցիկ երեկո նվիրելով իրենց հորն ու պապին, հայ կոմպոզիտոր, ջութակահար, դիրիժոր և մանկավարժ Մանվել Բեգլարյանին:

7

✓ *Методика преподавания профессора В. Арутюняна* 5

✓ Երեվանյան հայտարարություններ 8

ԵՊԿ 2019-2020 թթ. ուսումնական տարվա ընդունելության քննությունները

Ամփոփելով ԵՊԿ 2019-2020 թթ. ուսումնական տարվա քննությունների արդյունքները, նշենք, որ ընդունվեցին 112 դիմորդ, որից 30-ը արտերկրից են: Քննությունների թեմայի շուրջ խոսելով ԵՊԿ գիտության գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանի հետ, պարզաբանեցինք. *«Այս տարվա ընդունելության քննությունների նորամուծությունն եղավ այն, որ բացարձակ օբյեկտիվորեն գնահատվեցին կոնսերվատորիայի դիմորդների իրական հնարավորությունները. Մանավանդ, որ ինքս ունեցել եմ փորձ. Նախկինում եղել եմ հանձնաժողովի անդամ, գիտեմ, որ բավականին մեծ զիջումների գնալով, ամենացածր անցողիկ գնահատականը դրվել է գրեթե անգրագետ աշխատանքներին, քանի որ համարվում էր, որ այլ կերպ վարվելով մենք կկորցնենք վճարովի համակարգի ուսանողներ, չենք ունենա վճարովի համակարգ ընդհանրապես, չենք ունենա դիմորդներ, և իհարկե դրանից բխող հետևանքները. դա մեր դասախոսների ծանրաբեռնվածությունն է, կոնսերվատորիայի ներքին հարցերը լուծելու համար նախատեսված որոշակի գումարներն են, որոնք տրամադրվում են այդ նպատակով և այլն: Բայց այս պահին մեզ համար ավելի կարևոր է կոնսերվատորիայում ապահովել բարձր որակ, մակարդակ և դրա համար բավականին խիստ գնահատվեցին գրավոր քննությունները՝ սոլֆեջո, հարմոնիա և երաժշտական տեսություն առարկաներից: Պատկերը հետևյալն էր. դիմորդներից գրեթե կեսն ստացան անբավարար գնահատական սոլֆեջո գրավոր քննությունից, դա իհարկե շոկային էր, բայց նաև իրական պատկերն էր վերջին տարիներին ձևավորված դիմորդի տեսակի, մակարդակի: Ասեմ նաև, որ մենք ոչ մի պետպատվերով տեղ չկորցրեցինք, թափուր տեղեր չունեցանք, բոլոր պետպատվերով նախատեսված տեղերը զբաղեցված են, դուրս մնացին հենց այն մասնագիտությունների դիմորդները, որոնց համար նախատեսված էր միայն վճարովի համակարգում ուսուցումը: Այսինքն սա վերաբերում էր ակադեմիական կրթությունից դուրս գտնվող մասնագիտություններին՝ էստրադային-ջազային, ջազ-վոկալ, ժողովրդական երգեցողություն: Ակադեմիական երգեցողությունից ավելի քիչ եղան անբավարար ստացողները, բայց ունենք նման պատկեր: Ի՞նչն էր պատճառը: Պատճառը գալիս է դեռ տարիներ առաջ շատ սխալ ընդունված որոշումից, որ կոնսերվատորիա և ընդհանրապես Հայաստանի ցանկացած բուհ կարող է ընդունվել միջնակարգ կրթություն ունեցող ցանկացած շրջանավարտ: Բայց մի բանի մասին ենք մոռանում, որ կոնսերվատորիան ցանկացած բուհ չէ, կոնսերվատորիան մասնագիտական և շատ յուրահատուկ մասնագիտական կրթություն տվող և կրթություն պահանջող բուհ է և նախատեսում է որոշակի գիտելիքների նախնական պաշար, որով դիմորդը պետք է գա կոնսերվատորիա: Բայց որոշում կար, որ պարտադիր չէ մասնագիտական կրթության վկայականը, դա թույլ է տալիս ցանկացած դիմորդի բացարձակապես անգրագետ մտնել կոնսերվատորիա, հուսալով, որ կոնսերվատորիայում կլրացնեն իրենց գիտելիքի բացը: Սրանում մեծ հակասություն կա, և կարծում եմ մոտ ապագայում պետք է վերանայվեն այս հարցերը, որպեսզի մենք չունենանք այդպիսի պատկեր: Այն մասնագիտությունները, որոնցով դիմորդներն առնվազն 7, 8 տարվա մասնագիտական կրթություն ունեն՝ դա դաշնամուրն է, լարային, փողային գործիքներն են. այս մասնագիտություններով անբավարար ստացող ուսանողներ գրեթե չենք ունեցել, որովհետև այդ մասնագիտություններով հնարավոր չէ երաժշտական նախնական կրթություն չունենալ և մտնել կոնսերվատորիա: Անբավարար գնահատական ստացան այն ուսանողները, որոնք չունեին նախնական երաժշտական կրթություն: Սա իրական պատկերն էր: Մենք գոհ ենք արդյունքներից: Իհարկե տարին կլինի շոկային, որովհետև շատ դասախոսներ նաև կարող են զրկվել ծանրաբեռնվածությունից, բայց սա հնարավորություն կտա հետագայում մեր դիմորդներին ավելի մեծ պատասխանատվությամբ վերաբերվել այն հաստատությանը, ուր դիմում են, որից ակնկալում են բարձր գիտելիքներ, պրոֆեսիոնալ հմտություններ և չգան այստեղ որպես բացարձակ անգրագիտությունը վերացնելու մի հաստատություն:*

Տեսնելով այս մակարդակը, մենք որոշեցինք նախապատրաստական դասեր կազմակերպել: Ժամանակին ունեցել ենք նախապատրաստական բաժին, հետո դա չէր գործում, բայց նախաձեռնեցինք մեկ կամ գուցե երկու տարվա՝ կախված տվյալ ուսանողի հնարավորություններից, ընդունակություններից, հմտություններից, դասընթացներով վերացնել այդ անգրագիտության բացը և, որպեսզի կոնսերվատորիայի բակալավրականի առաջին կուրս ընդունվեն նրանք, ովքեր այդ նախապատրաստական դասընթացների միջոցով ստացել են այն նվազագույն պարտադիր գիտելիքները, որոնք ենթադրում է ընդունելության քննությունը:

Նոր ուսումնական տարին սկսել ենք նոր կրթական ծրագրերով, նոր ուսումնական ծրագրերով, որոնցում տեղ են հատկացվել կամընտրական առարկաներին, սա շատ կարևոր նորամուծություն էր, բայց և առաջնահերթ պահանջ՝ կրթության մասին օրենքից բխող, երբ ուսանողն ունենում է հնարավորություն ընտրելու իրեն հետաքրքրող առարկան առաջարկվող երկու կամ երեք առարկաներից: Նաև նորամուծություններից են լրացուցիչ՝ ֆակուլտատիվ դասընթացները, որոնք ուսանողները դարձյալ կամավոր սկզբունքով կարող են ընտրել:

Ի դեպ շատ առաջարկներ եկել են հենց ուսանողներից. երբ անցյալ տարի աշնանը, նորանշանակ ռեկտոր՝ Սոնա Հովհաննիսյանը հանդիպումներ ունեցավ և՛ ուսանողների, և՛ դասախոսների հետ: Եղան շատ առաջարկներ, խնդրանքներ, պահանջներ, որպեսզի կոնսերվատորիայում ապահովեն նաև այդպիսի հնարավորություն ուսանողների համար՝ ստանալու լրացուցիչ գիտելիքներ, դասընթացներ: Այդ ամիսների ընթացքում մենք աշխատանք ենք տարել, նախարարությունից որոշակի թույլտվություններ ենք ձեռք բերել շենքի ներսում, հաստատության ներսում ունենալու մեր ներքին գործընթացին վերաբերող դասընթացներ: Դրանց թվում են, օրինակ՝ իմպրովիզացիայի դասընթացը, գրաբարի, երգեհոնի կամ այլ դասընթացները:

Ուսանողների խնդրանքով ավելացրել ենք մասնագիտական առարկաների ժամանաքանակը. օրինակ վոկալիստները գտնում են, որ բավականաչափ չեն սոլֆեջո առարկայի դասաժամերը: Արդեն այս տարվանից նախատեսվեց ավելացնել շաբաթական ժամերը վոկալ բաժնում, իսկ կատարողների մոտ կրկին ներմուծվեց սոլֆեջո առարկան:

Որոշ դասեր պիլոտային (փորձնական) ծրագրով են անցնում, քանի որ առաջին անգամ են ներմուծվել, առաջին անգամ ենք փորձարկում: Բայց եթե դա իրեն արդարացրեց, գուցե հետագայում այդ դասընթացները կմտնեն կամ կամընտրականի մեջ, կամ ընդհանուր մասնագիտական դասընթացներում:

Նորամուծությունը վերաբերում էր նաև միջդիսցիպլինար առարկաներին, սա նույնպես առայժմ լինելու է ֆակուլտատիվ, ըստ ցանկության, պարզապես մեր ուսանողները ծանոթանալու են ոչ միայն նեղ երաժշտական մասնագիտական հարցադրումների խնդիրների շրջանակին, այլ նաև երաժշտական արվեստի հետ ոչ ուղղակիորեն կապված առարկաներին: Երբեմն ուսանողը պատկերացում չունի, թե երաժշտության հետ ինչերը կարող են փոխադարձ առնչվել՝ սկսած հոգեբանությունից, սոցիոլոգիայից, հեռուստատեսային ժուռնալիստիկայից, վերջացրած գենետիկայով, գիտության այլ ոլորտներով, որոնք պարզվում է, որ ունեն փոխադարձ առնչություններ երաժշտության հետ: Հրավիրում ենք հանրապետության լավագույն մասնագետներին, որոնք իրենց հետաքրքիր զեկուցումներով, վարպետության դասերով, մեր ուսանողներին, դասախոսներին ներկայացնում են այդ ոլորտները: Կարծում եմ, սա նոր էջ կբացի կոնսերվատորիայի կյանքում»:

Պետք է նշենք, որ ծանոթանալով նոր ընդունված որոշ ուսանողների հետ, մեզ շատ հետաքրքրեց նրանց մտքերն այն մասին, թե ի՞նչն է դրդել գնալ երաժշտության ուղիով, ի՞նչ ակնկալիքներ ու նպատակներ ունեն ընդունվելով կոնսերվատորիա: ԵՊԿ երաժշտագիտության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Անի Գաբրիելյանի հետ զրույցում նա նշեց. *«Մոտ 14 տարի երգում եմ Հայաստանի փոքրիկ երգիչների երգչախմբում՝ Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ: Կարելի է ասել առաջին քայլերս երաժշտության ասպարեզում հենց այդ երգչախմբում եմ արել:*

2014 թ. ավարտել եմ Սայաթ-Նովային անվ. երաժշտական դպրոցի ֆլեյտայի բաժինը: Երբևէ չեմ մտածել, որ շարունակելու եմ զբաղվել երաժշտությամբ: Տարիների ընթացքում իմ սերը երաժշտության նկատմամբ ավելի խորացավ: Երբ սովորում էի 12-րդ դասարանում և պետք է ընտրեի մասնագիտություն, հասկացա, որ իմ ուղին պետք է անցնի երաժշտության ճանապարհով: Մաեստրո Հեքեքյանի խորհրդով որոշեցի ընդունվել երաժշտագիտության բաժին: Այդ ժամանակ հասկացա, որ այդ մասնագիտությունը շատ մոտ է իմ էությանը: Ուսուցչիս՝ Սվետլանա Բոյաջյանի խորհրդով ծանոթացա երաժշտագետ Սվետլանա Սարգսյանի հոդվածներից մի քանիսին և ինձ համար բացահայտեցի մի գիտնականի, ումից կարծում եմ, որ յուրաքանչյուր երաժիշտ շատ բան ունի սովորելու: Դա է պատճառներից մեկը, որ այժմ ցանկանում եմ դառնալ երաժշտագետ քննադատ ժամանակակից երաժշտության բնագավառում: Հավատացած եմ, որ կոնսերվատորիայում գտել եմ հիանալի մասնագետների, որոնք ճիշտ կուղղորդեն իմ այս նպատակին հասնելու ճանապարհին»:

ԵՊԿ կոմպոզիցիայի բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Արմիկ Խաչատուրյանը հետևյալ կերպ արտահայտվեց. *«Հայրս կոմպոզիտոր է: Ամբողջ կյանքս երաժշտության մեջ եմ եղել: Ոգեշնչվելով միշտ ցանկացել եմ այդ ուղիով գնալ: Կարծես մշտապես իմացել եմ, որ լինելու եմ երաժշտության մեջ: Ավարտել եմ Պ. Չայկովսկու ՄՄԵԴ դաշնամուրի բաժինը: 10 տարեկանից գրել եմ ստեղծագործություններ և միշտ երազում էի ուսումս շարունակել որպես կոմպոզիտոր: Կոմպոզիցիայի 1-ին դասերը վերցրել եմ Աշոտ Ղազարյանից, և ներկայացնելով 3 ստեղծագործություն (երկու դաշնամուրային, մեկ խմբերգային) ընդունվել եմ կոնսերվատորիա: Երբեք չէի պատկերացնի, որ իմ խմբերգային ստեղծագործությունը՝ «Հատված Պ. Սևակի Եռածայն Պատարագից» այդքան մեծ կամ ընդհանրապես արձագանք կունենա. անասելի պատիվ է, որ «Հովեր»ի նման երգչախումբը՝ ի դեմս ղեկավար Սոնա Հովհաննիսյանի, ցանկացել է կատարել այն: Դա մեծ երջանկություն է և անչափ ոգևորիչ ինձ համար: Ընդունվելով կոնսերվատորիա նպատակ ունեմ զարգանալ և կատարելագործվել իմ մասնագիտության մեջ՝ գտնելով ինքս ինձ»:*

Դաշնամուրային բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Շուշան Ղուկասյանի խոսքերով. *«Մայրս և քույրս երաժիշտներ են և իմ ականջին անընդհատ հնչել է երաժշտությունը: Այլ մասնագիտության մեջ ես ինձ չեմ պատկերացրել: Ընդունվելով Երևանի պետական կոնսերվատորիա նպատակ ունեմ լավ կրթություն ստանալու և հուսով եմ , որ այստեղ ձեռք կբերեմ այն գիտելիքները, որոնք կկիրառեմ ապագայում՝ այս ասպարեզում իմ նպատակներին հասնելու ճանապարհին»:*

Խոսելով այս ուսանողների հետ մեծ ոգևորություն ու նպատակասլացություն նկատեցինք, որը շատ է ուրախացնում: Կարծում ենք, որ նրանք և նրանց նման ուսանողներն անպայման կգտնեն իրենց արժանի տեղը երաժշտության ասպարեզում և կօգտագործեն իրենց ձեռք բերած գիտելիքները հայկական երաժշտական արվեստի զարգացման գործում:

2019-2020 թթ. ուսումնական տարվա ընդունելության քննությունները Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
երաժշտագետ,
«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

Հայ թագուհիներ
Կոնսերվատորիայի հայ աղջիկներ

Սև աչերով կախարդիչ
Կոկոմ շուրթով բոցավառ
Հայոց ամեն մի աղջիկ
Թագուհի է դարեդար:

Ինչպես արև լուսատու
Ճառագայթում է հեռվից
Հուր հմայքով իրեն հատու
Կախարդանքի բևեռից:

Հիացմունք է հաղորդում
Մեր սրտերին, մեր հոգուն,
Գողեցկությամբ անսահման
Ծիածաններ փոթորկում:

Ամեն չքնաղ հայ աղջիկ
Թագուհի է մեծ գահի
Նրանց գործն է աշխարհեն
Որ մեր սրտերը փայփայեն:

ԼԱՉԻՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հայկական բանակի պահեստի սպա՝ մայոր,
ԵՊԿ փականագործ, հեպահույզ,
08.03.2017

ԵՊԿ էստրադային-զապային բաժնի 2018-2019 ուսումնական տարվա յեռֆբերումները

ԵՊԿ պրոֆեսոր Ն. Զարիֆյանի «Վոկալ շարքեր» ժողովածուի շնորհանդեսին,. ԳԱԹ-ում, 12.11.2018

Հանդիպում հայտնի կիթառահար և երգահան Բեն Ղարիբյանի հետ, ԵՊԿ ակուստիկ լաբորատորիայում 20.06.2019

ԵՊԿ դոցենտ Մ. Մացակյան, ԵՊԿ էստրադային-ջազային ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն. Զարիֆյան, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան կուլտուր-ատաշե՝ Ալեքս Բոլթոն, ԵՊԿ դոցենտ Ա. Հակոբյան, ԵՊԿ Միջազգային հարաբերությունների և հասարակության հետ կապերի բաժնի վարիչ Ա. Ավանեսով, Երևանի ֆրանսիական դպրոցի նախկին տնօրեն՝ Մարտեն Բեքեր, Գ. Մնացականյան, Ֆրանսիական մշակույթին նվիրված համերգից հետո

Մարտի 28-ին անցկացվեց Հայ-ռուսական համալսարանի ֆրանսիական երգի ամենամյա միջազգային փառատոնը՝ նվիրված Շառլ Ազնավուրի հիշատակին: ԵՊՀ-ի. ԵՊԼՀ-ի, Հայաստանի Ֆրանսիական և Ամերիկյան համալսարանների, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին մրցույթին, ներկայացնելով ֆրանսալեզու հայտնի երգեր: Միջոցառման ընթացքում հնչեցին Ազնավուրի *«La Boheme»*, *«La Mama»*, *«Ave Maria»*, *«Un vie d'amour»* երգերը նաև այլ ստեղծագործությունները: Միջոցառմանը ներկա էր նաև Հայաստանում ֆրանսիայի Արտակարգ լիազոր Դեսպան Ջոնաթան Լաքոթը: Հանձնախմբի կազմում էին Նազենի Հովհաննիսյանը, Զառա Պետրոսյանը, Կարեն Անանյանը, Նատալի Յագրիսը:

ԵՊԿ էստրադային-ջազային ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նարինե Զարիֆյան ԵՊԿ գիտխորհրդում ամբիոնի վարիչների ընտրության ժամանակ

Հանձնախմբի որոշմամբ 3-րդ մրցանակն ստացան Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանող Սուրեն Պողոսյանը և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանից Հեղինե Հայրապետյանը: 2-րդ մրցանակին արժանացան Հայ-ռուսական համալսարանի ուսանող Էռնա Թամազյանը և ԵՊԿ էստրադային-ջազային բաժնի ուսանող Արսեն Զաքարյանը (դասատու Իրինա Մալխասյան): 1-ին մրցանակը նվաճեց Հայ-ռուսական համալսարանի ուսանող Մարիաննա Մովսիսյանը: ԵՊԿ էստրադային-ջազային բաժնի ուսանող Դայանա Սարգսյանը (դասատու Հռիփսիմե Յելինյան) նույն մրցույթում արժանացավ պատվոգրի:

Մարտի 27-ին, «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ Երևանի պետական Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի էստրադային-ջազային ամբիոնի համերգ-հանդիպումը Սիենայի ջազ-ակադեմիայի հետ: Համերգով հանդես եկան ջազ-էստրադային բաժնի ուսանողները: Ներկա էին՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսորներ, դասախոսական կազմը, ռեկտորատի ներկայացուցիչները, Սիենայի ջազ-ակադեմիայի ներկայացուցիչները, ուսանողները: Ընտրվեցին 3 ուսանող, որոնք «Էրազմուս+» միջազգային փոխանակման ծրագրով ուսումնառությունը կշարունակեն Իտալիայի Սիենեա քաղաքի Ջազ ակադեմիայում՝ «Գործիքային կատարողականություն» ջազ-դաշնամուր» բակալավրական կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի 4-րդ կուրսի ուսանող Գարիկ Նորայրի Շարոյանը, «Կատարողական արվեստ մասնագիտության էստրադային-ջազային երգեցողություն» մագիստրոսական կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի 1-ին կուրսի ուսանող Նարեկ Մանուկի Հովհաննիսյանը և «Կատարողական արվեստ մասնագիտության էստրադային-ջազային երգեցողություն» բակալավրական կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի 4-րդ կուրսի Ինգա Վարդանյանը:

ԵՊԿ պրոֆեսոր Ն. Զարիֆյանի «Վոկալ շարքեր» ժողովածուի շնորհանդեսին, համերգից հետո ԳԱԹ-ում, 12.11.2018

Ֆրանսիական մշակույթին նվիրված համերգին, որը պատրաստել էին էստրադային-ջազային բաժնի ուսանողներն իրենց դասախոսների հետ, կատարվեցին ֆրանսերեն լեզվով երգեր, ինչպես նաև՝ գործիքային ստեղծագործություններ՝ գրված նույն բաժնի ուսանող Գարիկ Շարոյանի կողմից: Համերգին ներկա էին Հայաստանում ֆրանսիական դեսպանատան կուլտուր-ատաշեն՝ Ալեքս Բոլթոնը և Երևանի ֆրանսիական դպրոցի նախկին տնօրեն՝ Մարտեն Բեքերը: Տեսնելով այս բաժնի բարձր, պրոֆեսիոնալ մակարդակը Ֆրանսիական դեսպանատնից ամբիոնն ստացավ հրավեր մասնակցելու Բեն Ղարիբյանի համերգին: Այն տեղի ունեցավ սիրահարների այգում, գարնանը, որին մասնակցեց էստրադային-ջազային բաժնի ուսանող՝ Գարիկ Շարոյանն իր բենդով:

Նարինե Զարիֆյան, Հարություն Արզումանյան ՀՀ Ազգային ժողովի բակում Երևանի քաղաքապետի միացյալ նվագախմբի կատարմամբ հնչեց Ն. Զարիֆյանի «Աշնանային պատկերներ» քանոնի, շվիի և լարային նվագախմբի համար ստեղծագործության 2-րդ մասը՝ «Տերևաթափ», որը հատուկ գրվել է այդ նվագախմբի համար, դիրիժոր Հարություն Արզումանյան

Հունիսի 20-ին, ԵՊԿ ակուստիկ լաբորատորիայում տեղի ունեցավ հանդիպում աշխարհահռչակ ֆրանսահայ կիթառահար և երգահան Բեն Ղարիբյանի հետ (տե՛ս սույն ամսաթերթի #6 (6) հունիս 2019 համարը): Նա ելույթ ունեցավ իր եռյակով, իսկ էստրադային-ջազային բաժնի ուսանողները նրա հետ կատարեցին կիթառահարի երկացանկի ճանաչված երգերից մեկը

Նույն ամբիոնի ուսանողները՝ վարիչ, պրոֆեսոր Ն. Զարիֆյանի ղեկավարությամբ հրավիրվեցին ֆրանսիական դպրոցի ավարտական ամենամյա հանդեսին, որտեղ ելույթ ունեցան մեծ ծրագրով և արժանացան բարձր գնահատականի:

ԵՊԿ պրոֆեսորադասախոսական կազմը էստրադային-ջազային բաժնի ելույթին Ֆրանսիական դպրոցում

Նարինե Զարիֆյանի խոսքերով. *«Էստրադային-ջազային ամբիոնը շարունակում է ակտիվորեն մասնակցել տարբեր երկրներից ժամանած մասնագետների վարպետության դասերին, որը մեծ ազդեցություն է թողնում նրանց աշխարհայեցողության վրա, նաև հանդիսանում է հզոր ներուժ ուսանողների ոգևորության համար: Բավականին մեծ ծրագրեր կան. ամբիոնը պատրաստվում է ներկայանալ համերգով, որպես տարեկան հաշվետվություն: Ամրապնդում ենք կապերը տարբեր երկրների հետ. այժմ մեր երեք ուսանողները սովորելով միջազգային բարձրագույն ուսումնական հաստատություններում, ձեռք են բերում պրոֆեսիոնալիզմ և գալուն պես կկիսվեն իրենց ձեռք բերած փորձով ամբիոնի ուսանողների հետ նման ծրագրերը շատ ցանկալի են և ունեն իրենց նպատակը՝ զարգացնել ոչ միայն պրոֆեսիոնալ մասնագիտական հատկությունները, այլ նաև միջազգային մարդկային հարաբերությունները»:*

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ
երգչուհի

Համերգ՝ նվիրված Նարեկացու արվեստի միության 15-ամյակին

«Փարոս» կամերային երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Ռաֆֆի Միքայելյան, խմբավար Ռուբեն Կարասեֆերյան

«Նարեկացի» արվեստի միությունը Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը սեպտեմբերի 8-ին, հոբելյանական համերգային ծրագրով նշեց իր 15-րդ տարեդարձը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակներին:

Տոնական միջոցառումը մեկնարկվեց Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու խորհրդակատար Տեր Շահե քահանա Հայրապետյանի Տերունական աղոթքով:

Հոբելյանական երեկոն վարեցին Անահիտ Հակոբյանը և ՀՀ վաստակավոր արտիստ, դերասան Սամվել Բաղինյանը, ովքեր իրենց ոսկեձենիկ գեղեցիկ հայերենով ելույթը համեմեցին բանաստեղծական խոսքով:

Երեկոն իրենց անզուգական կատարումներով զարդարեցին «Նարեկացի» նվագախումբը (գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Արտեմ Խաչատուր), երգչուհի Լուսին Վանեսը, Լևոն Կարապետյանը (դաշնամուր), Գևորգ Կոջոյանը (տենոր), Աստղիկ Խաչատուրյանը (դաշնամուր), ՆԱՄ երգչախումբը (խմբավար՝ Անահիտ Սարգսյան), «Փարոս» կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Ռաֆֆի Միքայէլեան, խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան), «Նժդեհ» ազգագրական պարի խումբը (գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Գինոսյան, պարուսույց՝ Աբել Մաթևոսյան):

Միջոցառմանը խոսքով և ելույթով հանդես եկավ ջութակահար, դիրիժոր, երաժշտագետ, ՆԱՄ-ի գեղարվեստական խորհրդատու Դանիել Երաժիշտը և ներկայացրեց Գևորգ Կոջոյանի կատարմամբ հնչող «Սուրբ Մեսրոպ» (խոսք՝ Սիամանթո, երաժշ.՝ Դանիել Երաժիշտ) երգը՝ նշելով, որ 1913-ի հոկտեմբերին, Պոլսո «Պտի-Շատ» թատրոնում Կոմիտասի կազմակերպած հանդիսության ժամանակ, որը նվիրված էր Հայոց այբուբենի 1500-ամյակին և գրատպության 400-ամյակին, Սիամանթոն ընթերցել է իր «Սուրբ Մեսրոպ» պոեմն ու արժանացել Կոմիտասի գովասանքին:

«1985 թվականին կոմպոզիտոր Ալֆրեդ Շնիտկեն Գրիգոր Նարեկացու խոսքերով գրել է «Խառը երգչախմբի համար քառասաս Կոնցերտը»: Նա նշում էր, որ նախատեսել էր գրել այլ երաժշտություն, սակայն ստացվել է բոլորովին ուրիշը, քանի որ իր սենյակում թևածում էր Նարեկացու հոգոր ոգին: Այս պատմությամբ ցանկանում եմ նշել, որ «Նարեկացի» արվեստի միությունն արժանի է և արժանապատվորեն է կրում Սուրբ Գրիգոր Նարեկացու անունը», - ավելացրեց Դանիել Երաժիշտը:

«Նարեկացի» արվեստի միության հիմնադիր Նարեկ Հարությունյանն էլ իր շնորհակալությունը հայտնեց «Փարոս» կամերային երգչախմբին՝ ՆԱՄ-ի հիմնադրման օրվանից իրենց հետ լինելու համար:

«Ուղղորդվելով Սուրբ Գրիգոր Նարեկացու հոգևոր առաջնորդությամբ՝ 2004 թ. Երևանում հիմնադրեցի «Նարեկացի» արվեստի միությունը, որին հետևեց հաջորդ հաստատությունը Շուշիում՝ 2006 թվականին: Խիստ խորհրդանշական պատմությունը պետք է հիշեմ, երբ Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը մեծարում է Ամենայն Հայոց երգահան Կոմիտասին, վերջինս ի պատասխան ասում է. «Սիրելի՛ Հովհաննես, հրաշալին ես չեմ, այլ հայ ժողովուրդն է, քանզի եթե ժողովուրդն այսքա՜ն հրաշալի չլիներ, Կոմիտասն ինչ էլ աներ արդյունքի չէր հասնի»: ՆԱՄ-ը մի մասնիկն է հայ ժողովրդի՝ ծնված Աստծո հովանավորությամբ: Հիմք ընդունելով Կոմիտասի խոսքերը՝ պետք է ասեմ, որ եթե չլինի հայ ժողովրդի սերն ու մասնակցությունը, մենք կմնանք որբ, մեր գործերը՝ կիսատ, մեր սրահները՝ դատարկ: Այս տարեդարձը մեր ուխտի վերանորոգումն է: Շնորհակալ եմ բոլորին նվերների, ՆԱՄ-ի կողքին կանգնելու և աջակցելու համար», - նշեց Նարեկ Հարությունյանը:

Ամեն տարի Նարեկ Հարությունյանը տարեդարձի միջոցառումից հետո միության պատկերանշանն է նվիրում որևէ արվեստագետի, այս անգամ, մի փոքր շեղվելով ավանդույթից, նվերը հանձնվեց դահլիճում գտնվող ամենափոքրիկ ունկնդրին:

Դահլիճի ցուցասրահում ներկայացված էին 15 տարվա ընթացքում ՆԱՄ-ում հանդես եկած և իրենց աջակցությունը ցուցաբերած անհատների լուսանկարները: Միությունն անակնկալ էր պատրաստել նրանց համար՝ նվիրելով տարիների խորքում թաքնված անձնական լուսանկարները, որոնք ամփոփված էին ջերմ հուշերով և գեղեցիկ զգացողություններով:

15 տարվա ընթացքում ՆԱՄ-ում հանդես եկած և իրենց աջակցությունը ցուցաբերած անհատների լուսանկարների ցուցադրություն

ՆԱՄ երգչախումբը (խմբավար՝ Անահիտ Սարգսյան

«Նժդեհ» ազգագրական պարի խումբ, գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Գինոսյան, պարուսույց՝ Աբել Մաթևոսյան

Նյութը վերցված է https://www.facebook.com/Naregatsi/?epa կայքից պատրաստեց՝

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

«Նժդեհ» ազգագրական պարի խմբին միացավ ունկնդիրը՝ վերածվելով ժողովրդական հոբելյանի

Նարեկ Հարությունյանը միջոցառումից հետո, ավանդույթի համաձայն, այս անգամ միության պատկերանշանը նվիրեց դահլիճում գտնվող ամենափոքրիկ ունկնդրին

Լևոն Կարապետյան

Методика преподавания профессора В. Арутюняна

Наброски двух статей – “Практические советы для педагогов, занимающихся охраной детского голоса” и “Методика преподавания профессора В. Арутюняна” появились еще при Мастере. И это не случайно, потому что долгие годы, работая рядом с ним я многому училась, каждый раз слушая, как Валерий Апресович кропотливыми занятиями, методом поисков и анализа, учил сперва детей, а потом студентов искусству пения. С детьми я непосредственно не работала, но присутствовала на этих уроках, а шеф (как с любовью мы все его называли) делился со мной о своем понимании музыкального общения с детьми и часто повторял студентам: “Хотите понять как петь, слушайте природный чистый голос детей” и никогда не сожалел о годах, проведенных с ними. (В. Арутюнян долгие годы проработал методистом в Школе охраны детского голоса и преподавал в Школе искусств им. Л. Сарьяна, вокальный отдел которой теперь носит его имя.)

А я все это записывала. Тоже самое произошло со второй статьей, которая писалась непосредственно с ним. Сегодня ко мне часто кафедры, да и просто певцыс вопросом: как Валерий Апресович работал с детьми, какими принципами руководствовался и как ставил мужские, в особенности, низкие голоса. И, понимая, насколько в наши дни эти статьи стали актуальны, я решила не просто их опубликовать, а написать их от имени В. Арутюняна, потому что его голос продолжает звучать в моих ушах, я снова вспоминаю эти уроки; и мне кажется, что те педагоги, музыканты, которые будут читать педагогические советы Мастера, почувствуют его живое присутствие в каждом слове.

МАРГАРИТА АЛЬФРЕДОВНА САРКИСЯН
профессор ЕГК

С первых минут знакомства с новым учеником или студентом я стараюсь максимально "вжиться" в его голосовй аппарат, чтобы определить все его недостатки, преимущества и наметить себе этапы и темпы работы, которые глубоко индивидуальны для каждого обучающегося и зависят от его данных, работоспособности и интеллекта.

Работу педагога по вокалу условно я делю на две составляющие: дыхание и слово.

Дыхание певца делится на три группы:

1. Ключичное – это плечевое, что абсолютно неприемлемо.

2. Грудо–брюшное – это вид дыхания, при котором расширяются только ребра вследствие поверхностного вдоха.

3. Брюшно–диафрагматическое. В этом случае грудная клетка расширяется к направлению вниз и раздвигает ребра, которые помогают сохранить дыхательный аппарат в положении вдоха.

Студенты часто задают мне вопрос: как работать над дыханием? Вот пара практических советов:

1. Положить книгу на живот, взять вдох. При выдохе книга должна оставаться в первоначальной позиции.

2. Сомкнуть губы в трубочку и медленно выдувать воздух до конца. Желательно делать это упражнение с секундомером, чтобы с каждым разом увеличивать время выдувания.

3. Набрать воздух и, держа положение вдоха, громко считать.

Эти упражнения учат ровности дыхания и умению сохранять позицию вдоха и не перебирать количеством требуемого воздуха.

Излишнее дыхание – почва для форсированного пения, полный вдох надо делать в нижнем регистре, где связки бывают в расслабленном состоянии. Чуть меньше – можно взять в среднем регистре. В верхнем регистре не следует брать большого дыхания, так как это приводит к излишней напряженности. Во время пения верхних нот связки сами по себе стянуты и не дают пропуска воздуха.

Как же делать вдох? Некоторые предлагают давить на брюшные мышцы, другие – давить на ребра.

Я на протяжении своей певческой деятельности пришел к выводу: нельзя давить ни на что – ни на ребра, ни на брюшные мышцы, ни на голосовые связки. Любое напряжение тела дает напряженное звучание. Поэтому в период обучения я приучаю студента к мысли, что не голос важен, а важно дыхание, которое озвучивает слово и несет его вперед к слушателю. После спокойного вдоха воздушная струя дает обратное давление снизу на связки, которое удерживается словом, поставленным поверх связок. Слово становится на голосовые связки и удерживает идущую снизу воздушную струю только при опущенной гортани, что обеспечивает объемное пространство во рту, дающее возможность свободного проникновения воздуха в лицевые резонаторы, именуемые "маской". Поэтому, в первую очередь, я стараюсь правильно поставить слово. Многие говорят о постановке голоса, я же говорю о постановке слова. При правильном произношении слова формируется певческий тон, выявляется тембр голоеа, что помогает вокальной технике и умению распоряжаться ею, правильному художественному восприятию вокальной музыки, ее содержанию и стилю.

Я говорю со студентом о принципе разговорной речи и объясняю, что слово говорит язык и отрывать слово от языка значит уже обеспечйть себе неопертый бестембровый звук. Потому мелодия и слово, живя вместе, идут в разных направлениях. Чем выше ставится мелодия, тем ниже ставится слово, чем ниже ставится мелодия, тем выше ставится слово. То есть место слова не меняется, оно постоянно говорится на большом корне языка, опуская гортань и сдерживая струю воздуха. Это и есть единое место пения.

Работа над словом этим не ограничивается. Слово состоит из согласных и гласных звуков. Задача заключается в том, чтобы научить студента озвучивать согласный звук, а не гласный, который звучащий. Твердо произнесенно–озвученный согласный звук – залог четкой дикции и правильного места пения.

Часто я студентам говорю: "Упирайте согласные звуки в скулы", добиваясь тем самым высокой позиции и близкого пения.

Техническая база студента будет неполной, если не работать также над структурой звукоизвлечения. Диапазон голоса имеет 3 регистра: нижний (грудной), средний (грудно–головной) и верхний (головной).

Ноты нижнего регистра берутся полной грудью (целиком грудное звучание), сохраняя место пения. Средний регистр должен быть несколько округленным, т.е. собранным. Верхний регистр поется при крепкой опоре в головном резонаторе. При переходе от среднего регистра к верхнему необходимо соблюдать технику округления переходных нот. Для баса – это *b* малой октавы, *c-cis* первой октавы, для баритона – это *cis,d, dis* первой октавы, для тенора — это *e, f, fis* первой октавы. Проблема в том, чтобы переход от открытого к округленному – к круглому – окруженному – к открытому сделать плавным и гибким, не в ущерб тембровой окраске голоса.

Хотя я должен заметить, что проблема округления переходных нот глубоко индивидуальна для каждого студента, как и работа над вокалом с каждым студентом имеет свой, ему только присущий почерк, набор словесных комплексов, влияющих на его систему воображения и представления. Поскольку аппарат наш расположен внутри нас, мы его не видим. а только ощущаем, и у разных ребят он (аппарат) поразному устроен (у одних от природы высокое небо, у других язык стоит “картошкой”, у третьих разговорная речь полудефектная, изобилующая полугласными и т.д.), поэтому система объяснения не может быть трафаретной и догматичной. С каждым – свой язык, метод и подход.

Большой урон наносит процессу обучения подражание, желание копировать исполнительскую манеру и окраску голоса великих мастеров. Нужно и необходимо слушать записи, но надо знать когда и как. Часто мне задают вопрос: какими упражнениями я пользуюсь в работе со студентами?

Вот некоторые из них:

1. Специальное упражнение для выпевания согласных звуков. На:одной ноте говорится – да–да–да, ма–ме–ми–мо–му, на–не–ни. Крепко произносить согласный – гласный следует за ним. По полутонам поднимать и спускать.

2 Для выработки кантилены. Гаммообразно в пределах квинты подниматься и спускаться на : ре–ля; ре–ми–ля; ля–ле–ля; ма–ми–я.

3. Для использования подвижности в голосе, приближения звука. Поется быстро, активно, на полной атаке, но без нажима сверху вниз в пределах кварты:

миа–миа–миа–ма
ниа–ниа–ниа–на
диа–диа–диа'–да

Далее по полусекундам поднимаемся.

4. Для выравнивания звука, овладения округлением гласных звуков.В пределах полутона октавы на гласные а – у – о – а, а – и – е – а и т.д.

В методике преподавания большое значение имеет умение научить студента самостоятельно разбирать произведение. Разбор любого вокального произведения начинается прежде всего с тщательного и детального изучения словесного текста, который определяет всю структуру построения музыкальной фразеологии. Знание языков крайне необходимо для любого студента, чтобы брать дыхание где надо, а не где попало; не отделять артикль от слова; соблюдать правильное сочетание ударных и безударных слогов, которые в основном совпадают с сильными и слабыми долями музыкального текста. Знание значения каждого слова поможет правильному раскрытию сути знаков препинания музыкального языка, внутренних законов фразообразования, которые выходят за рамки обычного сочетания сильных и слабых долей.

Каждый язык обладает своей спецификой, влияющей не только на рисунок музыкального языка, но и на способы звукоизвлечения. Поэтому произведения всегда надо петь на языке оригинала и в редакциях страны оригинала.

Итак, первое правило студента, работающего над произведением, кропотливая работа над словом. Я советую студенту вслух, громко и четко, в утрированной форме читать текст, специально выделяя согласные звуки. Эту работу надо проделать прежде, чем выучить музыкальный текст, который требует четкого ритмического прочтения, соблюдения агогических и артикуляционных знаков, взаимодействующих со словесным текстом.

Далее следует изучение жанровых и стилистических особенностей произведения. К сожалению, студенты редко задумываются над этими задачами, и зачастую произведение подчиняется возможностям студента, а не наоборот.

Ответственный подход к тексту – вот к чему надо приучать студента с самого начала.

ВАЛЕРИЙ АПРЕСОВИЧ АРУТЮНОВ
профессор ЕГК,
заслуженный артист РА

Практические советы длч педагогов, занимающихсч охраной детского голоса

Детский голос – это тот природный золотой запас нации,
за который в ответе любой, кто к нему прикасается.
В. А. Арутюнов

За долгие годы работы с детьми (с 1974 года) я пришел к выводу, что нет ничего более сложного и отвественного, чем сохранить неповрежденным детский голос. На моей памяти много случаев, когда щедро одаренный детский голос исчезал после 17–18 лет из–за неграмотного и потребительского к нему отношения.

Как же надо работать с детьми, чтобы со временем их лучшие голоса стали бы достоянием нации и имели долгую творческую жизнь? Мой богатый опыт позволяет мне начертать тот кодекс правил, который не плохо было бы усвоить многим педагогам.

Первое правило в работе с детьми от 6 до12 лет: не отнимать у детей детства! Становитесь с ними детьми! Помните, что у детей своя психология, свое восприятие мира, свой комплекс знаний, воображения, словесного набора, идентичный их возрасту.

Никогда не забывайте о возрасте ребенка! Таким образом, правило второе: говорите и объясняйте на языке ребенка!

Чем проще, тем доступней и радостней будет для него общение с вами и с Музыкой. Подбирайте легкие детские песенки, созвучные его внутреннему миру, не обременяющие его детское воображение. Чем больше наивности. чистоты, естественности и ясной горизонтали между педагогом и ребенком, тем легче он будет впитывать и слышать музыку в себе.

Правило третье: никаких профессиональных разговоров о вокале! Педагог, бравирующий своими знаниями о постановке голоса, убивает в ребенке желание заниматься музыкой. Это урок пения, а не вокала! Беседовать нужно о содержании песенок, о слове, а не засорять мозги ребенка недоступной ему информацией о воспроизведении звука. Мудреная терминология только усложняет процесс выявления и первичной постановки голоса. Навыки дыхания и звукоизвлечения даются ненавязчиво, вместе с песней. Я говорю: "Рот открыл. дыхание вошло. Плечи не поднимай". Эти три короткие фразы достаточны, чтобы обеспечить дыхание как при разговоре. Ребенок начинает усваивать ту часть знаний, которая ему необходима на данный этап развития. Он постепенно начинает понимать, что вдох должен быть естественным, т.к. при раскрытии рта воздух сам поглощается столько, сколько нужно для пения одной фразы.

Что касается распевок, я даю специальное упражнение для выпевания согласных звуков. На одной ноте медленно говорится ми–ме–ма–мо–му. В хроматической последовательности поднимать и опускать в пределах квинты.

Или употребляю в качестве распевки короткие мотивчики из любой исполняемой ими песни, поднимая и опуская по полутонам в среднем регистре.

6

Գագիկ Հովունցի հիշատակին

Կյանքից հեռացավ Գագիկ Հովունցը, լինելով հայ կոմպոզիտորական արվեստի հիմնասյուներից մեկն իր բազմաժանր ստեղծագործությամբ և ինքնատիպ մտածելակերպի ու ոճի երաժշտությամբ:

Գագիկ Հովունցը լինելով նաև՝ ջութակահար, իր կոմպոզիտորական արվեստում հատուկ տեղ է հատկացրել ու ջերմությամբ ստեղծագործել ջութակի համար:

Հովունցյան քնարերգության լավագույն էջերից է 1990-ականների ստեղծագործություններից՝ ջութակի և թավջութակի Սոնատ-Դուետը: Դա երկու հարազատ էությունների զուգերգ է՝ արտահայտված մեկ երկխոսությամբ, մեկ մելամաղձոտ, մտազբաղ ոգեշնչումներով, մեկ էլ՝ էպիկական ուժով, որով պարուրված է ստեղծագործության ամբողջ 3-րդ մասը, ժողովրդական բանահյուսության ռիթմիկ պատկերներին ներդաշնակ:

Հովունցի երաժշտությանը յուրահատուկ է կրկնությունը, սիմետրիկությունը, լադային գունեղությունը և մտածելակերպը: Այն վառ կերպով արտահայտված է լարային Կվարտետում:

Գագիկ Հովունցի գրչին են պատկանում բազմաթիվ ստեղծագործություններ, ինչպես սիմֆոնիկ նվագախմբի Ինվենցիաների 3 շարքերը, դաշնամուրի և նվագախմբի Կոնցերտային ինվենցիաները, սիմֆոնիկ նվագախմբի գործիքների և դաշնամուրի 10 Պիեսը, դաշնամուրի Սոնատները և կարելի է ստեղծագործությունների թվարկումը շարունակել, այնքան բազմաթիվ են: Բայց, քանի որ նշեցինք դաշնամուրային գործերը, կանգ առնենք ստեղծագործական այս ոլորտի վրա: Ասենք, որ շատ անգամներ Հովունցը, կոմպոզիցիոն կառուցվածքի առումով չի սահմանափակվում ստեղծագործության դասական կառուցվածքի շրջանակներով, օրինակ սոնատային ձևի մասերի ներքին կառուցվածքներում դիմում է տարբերակային՝ վարիացիոն սկզբունքին: Նման մոտեցմամբ են ստեղծվել նրա Սոնատները:

Նրա ստեղծագործությունները մեզ հնարավորություն են տալիս ծանոթանալու Հովունցի հետաքրքրությունների մեկ այլ բնագավառի՝ փողային գործիքների նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի հետ:

Հայաստանի Հանրապետության վաստակավոր գործիչը իր բեղուն գործունեությամբ լիիրավ արժանի էր ժողովրդական արտիստի տիտղոսին, որը ներկայացված էր կառավարության ՀՀ կոմպոզիտորների միության կողմից, նա երաժիշտ կատարողների դաստիարակության բնագավառում ծավալում էր լայն գործունեություն, իր գիտելիքները փոխանցելով սաներին, և իհարկե ստեղծագործական անխոնջ, ամենօրյա տքնաջան աշխատանքով, Հայրենիքի բոլոր դժվարին և փառապանծ օրերին:

Այնքան նուրբ մտածելակերպ ուներ. Երբ նրա ծննդյան 65-ամյակին նվիրված ռադիոհաղորդում էր պատրաստել տողերիս հեղինակը, և հենց ծննդյան օրը՝ մարտի 1-ին գնաց եթեր: Մյուս օրն անմիջապես եկավ իր շնորհակալությունը հայտնեց և հավանել էր, թե որ ստեղծագործություններն էի եթերով հնչեցրել և որ հատվածները: Դա 1995-ն էր, սակայն բերել էր իր հետ, նախապես մակագրել, նվիրելու իր ստեղծագործությունների հիմնականում «Մելոդիա» ֆիրմայի թողարկած ձայնապնակները և խնդրեց ասելով

Գագիկ Հովունց

«Ես խնդրում եմ, ես որ հասնեմ այնօրվան՝ իմ այս ստեղծագործությունների դանդաղ այս հատվածները թող հնչեն» և մի մեծ ցանկ էր գրել: Ես ժպտալով սակարկեցի, ասելով. *«Ծննդյան այս ուրախ օրով ինչո՞ւ համար եք, այն էլ 65-տարեկանում նման հարցերի մասին մտածում»:* Ինձ ասաց. *«Ես գիտեմ ում ինչ եմ նվիրում և ինչ եմ ասում»:* Երբ գնացի Գագիկ Հովունցի հոգեհանգստին, նա 89 տարեկանում հեռացավ, սեպտեմբերի 1-ին, որդին միացրել էր ձայնարկիչը և հնչում էր Գագիկ Հովունցի ստեղծագործություններից այն նույն դանդաղ մասերի հեղնակային հղումները:

Կոմիտասյան 150-ամյա տարում կրեցինք Հայաստանի կոմպոզիտորներից յուրօրինակ ստեղծագործող և մարդու Գագիկ Հովունցի կորուստը.

«Դու ինչեր ես տեսնում, ինչեր, ո՜վ դիտակ,
Որ մեր աչքին՝ աներևույթ, անգիտակ.
Երկնի օրը քեզանով ենք կատարում,
Երկրի խորը քեզանով ենք պատառում:

Դարձի՜ր, դարձի՜ր, ով իմ դիտակ լուսածին՝
Կյանքի, ջանքի, հուսո հնար ճարելով,
Զարթիր, զարթիր, ո՜վ իմ գիտակ հուսածին՜
Մտքի, հոգու սիրո քնար լարելով»:

Սեպտեմբերի՝ ԵՊԿ Գիտական խորհրդում ձայնագրությամբ հնչեց Գագիկ Հովունցի պատգամն ու ջերմագին մաղթանքն իր գործընկերներին, ովքեր հոտնկայս լսեցին.

«Այսքան ժամանակ դասավանդում եմ կոնսերվատորիայում, որտեղ ուսանողության մեծ մասն աղջիկներ են, արդեն զգացել եմ նրանց առանձնահատկությունները. ...ամեն ինչ իր համար՝ սիրո մեջ է: Եթե հնարավոր լիներ, որ մայր դառնալուց հետո էլ նրանք պահպանեին իրենց երիտասարդության աղջկական զգացողությունները, ապա դա հասարակության մեջ շատ մեծ գործ արված կլիներ: Իսկ տղամարդիկ միշտ ցանկանում են արժանանալ կանանց: Ցանկանում եմ, որ կինը լիներ հնարավորինս գեղեցիկ և՛ հոգեպես գեղեցիկ, իսկ տղամարդիկ միշտ ծգտեին իրենց Դուլսինեային:

...Լավ մնացեք»:

Մեջբերումը ՎԷՄ ռադիոյի արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ դոցենտ Օլյա Նուրիջանյանի «Հայ կոմպոզիտորներ և կատարողներ» հաղորդաշարի հյուր՝ Գագիկ Հովունցի հետ հարցազրույցից է:

«Արվեստը՝ մարդկության գործունեությունն է, մեկը փոխանցում է իր վերապրած զգացմունքները, իսկ մյուսները վարակվում են այդ զգացումունքներով և վերապրում դրանք».

Լև Տոլստոյ

Այս բնութագրումով, որը դիպուկ է ասված Գագիկ Հովունցի համար էլ, ցանկանում ենք ամփոփել ականավոր կոմպոզիտորի և նրա արվեստի մասին մեր հուշերը:

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Երաժշտագետ

ԾԱՆՐ Է ՎԻՇՏՍ

Երջանկությունն իմ խաթարվեց
Ինչպե՞ս պահեմ վիշտս թաքուն,
Թող չիմանա աշխարհը մեծ
Ի՞նչ արցունք է սիրտս թափում:

Հեռու-մոտիկ թող չիմանան,
Սրտիս սիրո լարը խզվեց,
Ծանր վիշտս սարի նման
Բախտիս ձեռքով հոգուս տվեց:

Թռավ գնաց կեսն իմ կյանքի,
Սիրտս ու հոգիս թողեց խոցված,
Մեռավ հոգին իմ վայելքի,
Ո՛չ կյանք ունեմ, ո՛չ լուսաբաց:

Արցունքներս ծովին հանձնեմ,
Վշտերս տամ լեռներին,
Գնամ անհայտ մի տեղ մեռնեմ,
Չուլվեմ քարոտ բեկորներին

ԼԱՉԻՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հայկական բանակի պահեստի սպա՝ մայոր, հեղինակ,
ԵՊԿ փականագործ
08.03.2017

Практические советы для педагогов, занимающихся охраной детского голоса

5

Никаких крайних верхних или низких нот! Максимум естественности и отсутствие какого–либо напряжения.

После 12 лет начинаются физиологические изменения в организме. Вступает в силу мутационный период, который у мальчиков проходит намного сложнее и болезненнее. чем у девочек уже только потому, что девочки развиваются легче и быстрее, чем мальчики. У мальчиков только горло увеличивается в 3/4 раз, у девочек – в 1/4 раз, соответственно и неудобства у мальчиков значительней. Мутационный период делится на 3 стадии. Наиболее опасный из них первый, потому что выявляется он не сразу. Педагог должен обладать очень чутким ухом и крайне ответственными принципами, чтобы вовремя и беспрекословно внести соответствующие коррективы в занятия. Именно этот период часто становится причиной потери голоса. Дело в том, что у многих подростков, обладающих прекрасным голосом, в предмутационный период складывается активная, концертная жизнь, которая вскруживает голову им, их педагогам и родителям. Преждевременная слава, почести ослепляют их настолько, что теряется ощущение реальности и чувство отвественности за транжируемый раньше времени природный запас, который, как правило, в первой стадии мутации должен отдыхать.

Подростки, вступающие в эту стадию развития, очень часто психологически бывают неподготовленными к этим изменениям. И начинается не только ломка голоса, но и ломка личности, которая становится причиной нервного стресса, непонимания и внутреннего сопротивления происходящему. В особенности тяжело переживают этот период мальчики, у которых организм развивается медленно.

Мудрый педагог еще до начала мутации голоса подготовит подрастающего ученика к этим жизненно необходимым и естественным изменениям, связанные с природой и возрастом. Сам педагог должен суметь устоять перед соблазном реализации собственных честолюбивых амбиций. А ученик –способным принять мысль, что нет ничего дороже голоса – божьего дара. Карьера, имя, сценический блеск, аплодисменты, деньги – приобретаемые категории, а голос –нет. Его можно потерять навсегда.

Поэтому, как только педагог начинает слышать неудобства в голосе (неподчинение в крайних регистрах, напряженное звучание), тут же он должен сократить занятия и уменьшить нагрузку на голос. Таким образом, психологически и физически подготовить ученика к молчанию во второй стадии мутационного периода. Идет процесс расширения гортани, организм слабеет. Петь только легкие упражнения, специальные вокализы и ждать, куда поведет природа, т.к. обычно после мутации у мальчиков голоса меняются. Много надо заниматься физкультурой, бегом, плаваньем. Повышать музыкальную культуру, теоретические знания. И главное понять, что молчание – не катастрофа, а золото, дающее богатство позже. Конечно, многие пренебрегают этим предупреждением, продолжают перегружать голос, но надо знать, что в этом случае голос изнашивается рано и творческая жизнь у этих ребят бывает короткой.

Третий период – окончание процесса мутации, который длится у низких голосов до 25–27 лет, у высоких – до 23 лет. У девочек весь мутационный процесс проходит намного легче. Голос обычно не меняется, но значительно выигрывает в диапазоне и в силе. В любом случае надо помнить железно одно правило: в мутационный период и у мальчиков, и у девочек голос перегружать нельзя. Голосовой аппарат должен отдыхать, укрепляться и набирать естественную силу.

Во время третьего периода начинается профессиональная постановка голоса, более углубленное понимание тех навыков, которые усваивались в детстве в упрощенном варианте. Этот этап развития уже требует овладения брюшно–диафрагматическим дыханием, понимания позиции опущенной гортани, единого места пения, идущего от правильной постановки слова, особого отношения к которому я обучаю детей с детства.

Правильная закладка фундамента в детстве – залог успеха профессионального будущего.

ВАЛЕРИЙ АПРЕСОВИЧ АРУТЮНОВ
профессор ЕГК,
заслуженный артист РА

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԵՎ ԴԻՐԻԺՈՐ ՄԱՆՎԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ

«Ժառանգություն» վավերագրական ֆիլմի յուսադրությունը Երևանում

Միջոցառմանը ներկա էին անվանի երաժիշտներ, գրողներ, երաժշտագետներ, բանասերներ և այլք:

Որդին« Մեր Բեգլարյանը, որը երկար տարիներ բնակվում է Գերմանիայում և այնտեղ են ծնվել նաև իր երեք դուստրերը, պատմեց, որ իրենք, հատկապես ավագ դստեր՝ դաշնակահարուհի Աստղիկ Բեգլարյանի մեծագույն օգնությամբ, նախաձեռնել են Մանվել Բեգլարյանի ստեղծագործական ժառանգության պահպանման և հանրահռչակման գործը:

2014-ին թողարկվել է Բեգլարյանի դաշնամուրային ստեղծագործությունների ձայնասկավառակը, Աստղիկ Բեգլարյանի կատարմամբ, տպագրվել է դաշնամուրային ստեղծագործությունների ժողովածուն, իսկ ամերիկացի պրոդյուսեր, կոմպոզիտոր Ռենդալ Մայերսի ղեկավարությամբ նկարահանվել է «Ժառանգություն» վավերագրական ֆիլմը, որտեղ ներկայացվում է Մանվել Բեգլարյանի կյանքն ու գործունեությունը: Ընդհանրապես, ամբողջ այս նախագիծը կրում է «Heritage» անվանումը, որը թարգմանվում է և՛ որպես ժառանգություն, և՛ որպես ծագում: Ֆիլմում ընդգրկված են նաև հատվածներ Աստղիկ Բեգլարյանի՝ 2014 թվականին Երևանի Արամ Խաչատրյան համերգասրահում կայացած համերգ-շնորհանդեսից:

Ունկնդրելով Բեգլարյանի դաշնամուրային ստեղծագործությունները, վեց պրելյուդները, վարիացիաները, ֆուգաները՝ պարզ է դառնում, որ դրանք գրված են հայ դասական երաժշտության լավագույն ավանդույթներով՝ պահպանելով ազգային ինտոնացիաների, մեղեդիների օգտագործումը, զուգակցված դաշնամուրային ֆակտուրայի վիրտուոզ հնարներով: Աստղիկ Բեգլարյանը, որը սովորել է Մանհայմի և Հաննովերի կոնսերվատորիաներում, կատարում էր պապի երկերն անկեղծ ոգեշնչմամբ, փայլուն դաշնամուրային տեխնիկայի և զգացմունքայնության գեղեցիկ ներդաշնակությամբ: Պապի հետքերով է գնացել նաև միջնեկ թոռնուհին՝ Արևիկ Բեգլարյանը, որն այժմ կոմպոզիցիա է ուսանում Ֆրանկֆուրտի կոնսերվատորիայում:

Միջոցառման սկզբում Մեր Բեգլարյանը հանգամանորեն ներկայացրեց Մանվել Բեգլարյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը և այդպիսով հնարավոր եղավ Մանվել Բեգլարյանի կենսագրությունը համալրել որոշ՝ հանրությանը մինչ այժմ անհայտ մանրամասներով:

Շուրջ 50 տարվա իր երաժշտական, ստեղծագործական և մանկավարժական գործունեությամբ Մանվել Բեգլարյանն իր ուրույն խոսքն ասաց և իր հետքը թողեց հայ երաժշտարվեստի մեջ:

Մանվել Կարապետի Բեգլարյանը ծնվել է Թիֆլիսում, 1922 թ., վանից գաղթած ընտանիքում: 1930-ականներին տասնամյա Մանվելի մոտ ձևավորվել է սերը դեպի երաժշտությունը և 1932 թ. տեղափոխվելով Երևան՝ սովորել և ավարտել է Ա. Սպենդարյանի անվան երաժշտական դպրոցի ջութակի բաժնում:

8

ԱՆՎԵՐՋ ՎԵՐԱԴԱՐՁ

Կես դար քամանչայիս հետ

Ստեփանակերտի Պատկերասրահում կայացած «Կես դար Քամանչայիս հետ» խորագիրը կրող ցուցահանդես-համերգին Հակոբ Խալաթյանի ներկայացված 40 աշխատանքներից մի հատված «Կարոտ» շարքից՝ «Տարվա եղանակներ» եռանկարը՝ Ձմեռ, Գարուն, Աշուն

Պատկերասրահում ներկայացվեցին Հակոբ Խալաթյանի գեղանկարները և այլ աշխատանքներ:

Հակոբ Խալաթյանը երկու տարի աշխատում է Արցախում: Պատկերասրահի տնօրեն Ելենա Դադայանն իր խոսքում ընդգծեց, որ այս համերգը նվիրված է Հակոբ Խալաթյանի հոբելյանին և կես դարյա գործունեությանը, խորհրդանշականն այն է, նկատում է բանախոսը, որ այդ նշանակալից տարեթիվը նա նշում է Արցախում:

Ինչպես խոստովանում է քամանչահար վարպետը. նա սիրում է հենց այս ձևաչափով հանդիպել մարդկանց՝ զրուցել, պատմել, նվագել: Իսկ տեղեկությունները, որ երաժիշտը հաղորդում էր հանդիսատեսին, բազմազան ու չափազանց հետաքրքիր էին՝ հին արևելյան նվագարաններին, դրանց փայլուն տիրապետող երաժիշտների, իր կյանքի փուլերի մասին: Համերգի ընթացքում նրան միացան նաև այլ երաժիշտներ՝ ինչպես բազմափորձ, այնպես էլ՝ սկսնակ: Համերգին մասնակցել են Արցախի պետական երգչախումբը՝ Նինա Գրիգորյանի ղեկավարությամբ, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվ. երաժշտական քոլեջում նրա ստեղծած «Սազանդարների եռյակը, ժողովրդական գործիքների նվագախումբը՝ Հակոբ Խալաթյանի ղեկավարությամբ և Կոմիտասի անվ. երաժշտական դպրոցի աշակերտ, փոքրիկ շնորհաշատ երգիչ Վլադիմիր Գալստյանը: Օրագրում ընդգրկված էին թե՛ հայ աշուղների՝ Սայաթ-Նովայի, Աշոտի, և թե՛ հայ կոմպոզիտորների՝ Կոմիտասի, Է. Բաղդասարյանի ստեղծագործությունները: Բաղդասար Դպիրի (XVII դար) «Ի Նշմանեդ» և Սայաթ-Նովայի «Բլբուլի հիդ» ստեղծագործությունները կատարվեցին նվագախմբով, Հակոբ Խալաթյանի փոխադրմամբ, Ռուբեն Ալթունյանի մշակմամբ:

Հակոբ Խալաթյան, «Սազանդարների եռյակ» (թառ, քամանչա, դհոլ, հիմնադիր և ղեկավար Հակոբ Խալաթյան), քանոնահարների քառյակ, մենակատար՝ Ստեփանակերտի Կոմիտասի անվ. երաժշտական դպրոցի աշակերտ Վլադիմիր Գասպարյան, կատարեցին Գրիգոր Սյունու «Հա կլոր» երգը, Ստեփանակերտի Պատկերասրահում կայացած «Կես դար Քամանչայիս հետ» խորագիրը կրող ցուցահանդես-համերգին

Հակոբ Խալաթյանի անցած 50 տարիների համառոտ կոլաժ-նկարներ՝ ներկայացված Ստեփանակերտի Պատկերասրահում կայացած «Կես դար Քամանչայիս հետ» խորագիրը կրող ցուցահանդես-համերգին

Քանոնահարների քառյակ, Ստեփանակերտի պետական երգչախումբ (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Նինա Գրիգորյան, մենակատար Նուբար Սաղյան, կատարում են Սայաթ-Նովայի «Բլբուլի հիդ» երգը (մշակումը՝ Ռուբեն Ալթունյանի)

Հակոբ Խալաթյանի աշակերտները Շուշիի և Ստեփանակերտի երաժշտական և արվեստի դպրոցներից

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԼԱՅԱՆ

https://www.youtube.com/watch?v=1kIQDILV3J8

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Շոտլանդիայի Թագավորական կոնսերվատորիայի ներկայացուցիչները ԵՊԿ-ում

❖ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի հյուրերն էին Շոտլանդիայի Թագավորական կոնսերվատորիայի ներկայացուցիչներ Յուլիա Աննա Չերներ-Ատլասը, Ֆրենսիս Քումինգը, Ֆիլիպ Ուայթը և Լև Ատլասը: Այցի շրջանակներում, ի թիվս բազմաթիվ միջոցառումների, տեղի ունեցան հանդիպումներ կոնսերվատորիայի ղեկավարության հետ, քննարկվեցին երկու հաստատությունների համագործակցությանն առնչվող խնդիրներ:

Շնորհավորում ենք

❖ ԵՊԿ դասախոսներ՝ **Դավիթ Ղազարյանը, Էդուարդ Թադևոսյանը, Ալեքսանդր Կոսեմյանը** և **Սյուզի Երիցյանը** պարգևատրվել են «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով, իսկ **Ծովինար Հովհաննիսյանն** արժանացել է «Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման»:

❖ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Կամերային-գործիքային անսամբլի ամբիոնի դասախոս, դաշնակահար **Աիդա Բաղդասարյանին** և դոցենտ, ջութակահար **Անահիտ Լավչյանին** «Heirs of Orpheus» միջազգային երաժշտական մրցույթում «Կամերային անսամբլ» անվանակարգում 3-րդ կարգի դիպլոմի արժանանալու առթիվ:

Աիդա Բաղդասարյան, Անահիտ Լավչյան

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԵՎ ԴԻՐԻԺՈՐ ՄԱՆՎԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ

«Ժառանգություն» վավերագրական ֆիլմի յուցադրությունը Երեւանում

7

Սակայն ավարտելով դպրոցը՝ նա մեկնում է ռազմաճակատ, և վերադարձից հետո որոշում ընդունվել բժշկական ինստիտուտ՝ կարծելով, որ այլևս չի կարողանա վերականգնել իր կատարողական հմտությունները որպես ջութակահարի:

Բայց սերը դեպի երաժշտությունն, ի վերջո, հաղթում է, և մեկ տարի անց նա ընդունվում է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան, ապա շարունակում ուսումը կոնսերվատորիայում՝ ավարտելով 1951 թվականին ջութակի (Հրաչյա Բոգդանյանի դասարան) և մանկավարժության բաժինները: Նույն ժամանակահատվածում աշխատում է նաև Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբում՝ ձեռք բերելով հարուստ երաժշտական փորձ: Սակայն, ստեղծագործելու ձգտումը հանգիստ չէր տալիս Մանվել Բեգլարյանին, և նա 1959 թվականին նորից է ընդունվում կոնսերվատորիա, սովորելով կոմպոզիցիա նշանավոր կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյանի դասարանում:

Հետագայում թողնելով աշխատանքը սիմֆոնիկ նվագախմբում՝ Մանվել Բեգլարյանն իրեն նվիրում է ստեղծագործական և մանկավարժական աշխատանքին և արդեն ձգտում է ստեղծագործել ժողովրդական երաժշտության ասպարեզում: Սիմֆոնիկ ստեղծագործությունների կողքին ծնվում են ժողովրդական համույթների համար գրված գործեր և երգեր: 1960-ականներին դասավանդում է նաև Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանում՝ ղեկավարելով նաև ուսումնարանի սիմֆոնիկ նվագախումբը: 1970-1971 թվականներին դասավանդում էր նաև թիվ 3 կուլտուրայի տանը՝ ղեկավարելով «Պատանեկություն» վոկալ-գործիքային էստրադային նվագախումբը, որտեղ նվագում էին այսօր արդեն նշանավոր այնպիսի արվեստագետներ, ինչպիսիք են Ռոբերտ Ամիրխանյանը, Երվանդ Երզնկյանը, երգչուհիներ Ռաիսա Մկրտչյանը, Զառա Տոնիկյանը: Սա էլ մի նշանավոր դրվագ էր նրա կենսագրության մեջ: Այնուհետև Թաթուլ Ալթունյանի հրավերով ղեկավարում է Երևանի երգիպարի պետական անսամբլի գործիքային մասը:

1970-ականները շատ բեղմնավոր էին Մանվել Բեգլարյանի մասնագիտական կյանքում. նա դարձել է Կոմպոզիտորների միության անդամ, 1974-1992 թթ. որպես գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր ղեկավարել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլը, որտեղ կատարել և ձայնագրել է ավելի քան 1000 երգ և գործիքային ստեղծագործություն: 1982 թ. արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման:

Նրա ղեկավարությամբ անսամբլը համերգներ է տվել Հայաստանի բոլոր շրջաններում, Մոսկվայում, Անդրկովկասի մյուս հանրապետություններում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Սիրիայում, Ալժիրում, Ավստրալիայում, Հնդկաստանում և այլուր:

Այս անսամբլում Բեգլարյանն աշխատել է Ռուբեն Մաթևոսյանի, Օֆելյա Համբարձումյանի, Հովհաննես Բաղալյանի, Վալյա Սամվելյանի, Պապին Պողոսյանի, Ֆլորա Խորենյանի, Նորայր Մնացականյանի, Վարդուհի Խաչատրյանի, Անժելա Աթաբեկյանի, Հակոբ Խալաթյանի, Նորայր Դավթյանի, անվանի դուդուկահարների և հանրահայտ այլ երաժիշտների հետ:



Գերմանիայում հրատարակվել է Մանվել Բեգլարյանի ստեղծագործությունների ժողովածուն

Նա իր աշխատանքով ոգևորում և դեպի ժողովրդական երաժշտություն էր ուղղորդում ժամանակի անվանի կոմպոզիտորներ Էդուարդ Միրզոյանին, Ալեքսանդր Հարությունյանին, Խաչատուր Ավետիսյանին, Վլադիլեն Բալյանին, Արամ Սաթունցին, Գրիգոր Հախինյանին, Յուրի Գևորգյանին, Երվանդ Երկանյանին, Ռոբերտ Պետրոսյանին, Գեղունի Չթչյանին, Տիգրան Մանսուրյանին, Ալեքսեյ Հեքիմյանին և շատ ուրիշների: Չափազանց կարևորում էր նաև հայ աշուղների ժառանգության պրոպագանդան՝ Սայաթ-Նովայի, Ջիվանու, Հավասու, Գուսան Աշոտի, Շերամի, Շահենի և այլոց:

1981-ից նա դասավանդել է գործիքագիտություն առարկան Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (սկզբում՝ դոցենտ, 1999-ից՝ պրոֆեսոր): Կազմել է մի շարք ձեռնարկներ, գրել սիմֆոնիկ, կամերային ժանրերի ստեղծագործություններ, երգեր հայ պոետների խոսքերով, ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողական ժողովրդական գործիքների անսամբլի ստեղծմանը:

Ունի ՀՀ Ռադիոյում ֆոնդային ձայնագրություններ: Կյանքի վերջին տարիներին համագործակցել է բանաստեղծներ Գարիկ Բանդուրյանի, Բաբկեն Սիմոնյանի և այլոց հետ: «Քարավան լուսո» ստեղծագործությունը, որը վերնագրել է բանաստեղծ Բաբկեն Սիմոնյանը, եղավ նրա վերջին ստեղծագործությունը և դրանով նա հեռացավ՝ կարծես իրենից հետո թողնելով այդ լույսը: Մահացել է 2002 թ., Երևանում:

Միջոցառման ընթացքում Սիլվա Կապուտիկյանի տունթանգարանի տնօրեն Արմենուհի Դեմիրճյանը ներկայացրեց Մանվել Բեգլարյանի բարեկամուհու՝ Սիլվա Կապուտիկյանի հուշերը. «Հուշատախտակ Մանվել Բեգլարյանին» ստեղծագործությունը, որտեղ պատմում է, որ հանիրավի մոռացության է տրվել Մանվել Բեգլարյանի գործունեությունը: Հեռվից է գալիս իր հուշերում Կապուտիկյանը՝ խոստովանելով, որ վանեցու և ազգականի պարտավորվածությամբ ինքը պետք է անպայման անդրադառնար Մանվելին, պատմելով, որ իր տատ Նոյեմզարի և Բեգլարյանների ապուտատ Մարգարիտի շառավիղներն են իրենք, և ընտանիքները հանդիպում են այն ժամանակ, երբ Կարապետ Բեգլարյանը տեղափոխվում է Երևան, որպեսզի ավարտի բժշկական ինստիտուտը: Հիշում է, այդ ժամանակ արդեն վանեցիները մի համայնք էին ստեղծել և մշտապես դաշտահանդեսներ էին կազմակերպում Երևանի մերձակայքերում: Կապուտիկյանը հատկապես նշում է վանեցիների կենսասիրական ավյունը Մեծ եղեռնից ընդամենը 7-8 տարի անց՝ կարծես կոչ անելով հայ ժողովրդին նմանվել վանեցիներին և թոթափել վշտերը:

Թողարկվել է Մ. Բեգլարյանի դաշնամուրային երկերի CD-ն թոռնուհու՝ Աստղիկ Բեգլարյանի կատարմամբ

Կարապետ Մանուկի Բեգլարյանը մասնագիտությամբ բժիշկ էր և հետագայում եղել է Ջերմուկ քաղաքի պոլիկլինիկայի հիմնադիրն ու գլխավոր բժիշկը: Կապուտիկյանը հիշում է, թե ինչպիսի երաժշտական էր Կարապետի ընտանիքը. Կարապետը թառ էր նվագում, կինը հրաշալի երգում էր, աղջիկը պարում էր, ավագ տղան՝ Սամվելը, դափ էր խփում և հետո արդեն նրանց է միանում Մանվելն իր ջութակով: Եվ հայրը միշտ խրախուսում էր Մանվելին ոչ միայն կատարել ուրիշների ստեղծագործությունները, այլ ստեղծել իրենը, որպեսզի ուրիշները կատարեն:

Իր հուշերում Սիլվա Կապուտիկյանը հավելում է, որ Մանվել Բեգլարյանն ինչպիսի խանդավառությամբ ու գովեստով էր հիշում իր արտիստներին. Ռուբեն Մաթևոսյանի մասին ասում էր. *«Ռուբիկը՝ մի աշխարհ, մի փիլիսոփայություն, և՛ երգ, և՛ սիրտ, և՛ հոգի»*, իսկ Հովհաննես Բաղալյանի մասին ասում էր. *«շատ հայեցի ձայն ունի. տաք է, նուրբ է և միշտ կարոտ կա ձայնի մեջ»:*

Կապուտիկյանը նշել է, որ չի սիրել և դեմ է եղել երաժշտությանը բանաստեղծություն հարմարեցնելուն, սակայն երկու մարդու չէր կարողանում մերժել. առաջինը Խաչատուր Ավետիսյանն էր, երկրորդը՝ իր զարմիկ Մանվել Բեգլարյանը: Եվ, նրա խնդրանքով բանաստեղծական տեքստ է հարմարեցրել «Արտաշես և Սաթենիկ» պոեմի երաժշտական նախերգանքին, այդպես է ստեղծվել նաև «Վարագա լեռ» պոեմի երաժշտական նախերգանքը:

Արմենուհի Դեմիրճյանի խոսքով՝ Մանվել Բեգլարյանի մասին հատվածը Սիլվա Կապուտիկյանի «Վերջին զանգ» գրքի ամենաջերմ հատվածն է, հավանաբար որ վերաբերվում է իր հայրենակցին, հարազատը, և այսպիսի տողերով է ավարտում մեծ բանաստեղծուհին այդ գիրքը. *«Դո՞ւ, Մանվե՞լ Բեգլարյան, այս մագիլավոր դարում մագիլներ չունեցար, չկարողացար քեզ պարտադրել, չկարողացար քեզ ներկայացնել ինչպես հարկ է, բայց ժամանակը կգա, ու մարդիկ կգնահատեն քո մեծ վաստակը»:*

Իրապես, այժմ Բեգլարյանների ընտանիքն սկսել է Մանվել Բեգլարյանի կյանքին և գործունեությանը վերաբերող նյութերի տարածումը, և հուսանք, որ մոտ ապագայում այդ տեղեկատվությունը հասանելի կլինի երաժիշտների և հայ երաժշտասերների լայն շրջանակին:

Խմբագրական

Նյութը վերցվել է https://www.azg.am/AM/culture/2019092003?fbclid կայքից

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Խմբագիրներ՝ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (հայ), ՍՈՖԻԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս.)

Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 8 էջ: Ստորագրված է 27.09.2019:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք.Երևան, Սայաթ-Նովա 1ա
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/